

Նիկոպոլիս անունը: Դ, դարուն այս քաղաքը շփոթուեցաւ Աւետարանի եմմաւուսին հետ, ահա թէ ինչպէս. Ս. Դուկաս կ'ըսէ թէ Յիսուս իր յարութեան օրը, իր երկու աշակերտներուն յայտնուեցաւ եմմաւուսի մէջ, «գիւղ մը որ հեռու էր Երուսաղէմէն 60 ասպարէզ»: Յովսեպոս իր կողմէ կը պատմէ թէ Վեսպասիանոս 75 ին ազատեց 800 ձեր զինուորականները և անոնց տուաւ մշակութեան հողեր, «տեղւոյ մը մէջ որ իրապէս կը կոչուէր Ամուաս, որ հեռու էր Երուսաղէմէն 60 ասպարէզ»:

Հռովմայեցիները սովորաբար Նիկոպոլիս, յարրական անունը կուտային նոյն գրաւուած երկրին տեղերէն մէկուն: Վեսպասիանոս այս տիտղոսը տուաւ եմմաւուսին, կ'ըսէ Սոզոմէն: Բայց երկուքէն որո՞ւն: Ստուգիւ ոչ դաշտի եմմաւուսին, ինչպէս պիտի տեսնենք, և ձեր զինուորականներուն աւանը իրաւունք ունէր այս պատուին: Գրեթէ 62 տարի յետոյ զինուորականներու եմմաւուսը անյիշատակ մնաց հարիւրաւոր ուրիշ տեղերու հետ, Պարքոքէպայի առաջնորդութեամբ հրեաներու ապստամբութեան ժամանակ: 222 ին Յուլիոս Ափրիկանոս վերանորոգեց դաշտի եմմաւուսը, որուն քաղաքապետն էր, նախ Հելիոկապալէն, յետոյ Աղեքսանդր-Աւերոսէն հրաման խնդրեց Նիկոպոլիս անունը տալ անոր, «ի յիշատակ այն յաղթութեան՝ զոր Հռովմայեցիները տարին հրեաներու դէմ Վեսպասիանոսի ժամանակ», կ'ըսեն Եւսեբիոս, Յերոնիմոս և Կասսիոտոր. այն ատենէն սկսեալ ան կը կոչուի եմմաւուս-Նիկոպոլիս: Զինուորականներու եմմաւուսին տրուած տիտղոսը այս կերպով պահուեցաւ:

Յետոյ, Եւսեբիոս՝ գուցէ Որոզինէս մէկ եմմաւուս գիտնալով՝ կարծեց թէ դաշտինը միւսնոյնն էր